

ԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հրատարակվող նամակներում արծարծվում են գործնական հարցեր՝ կապված հեղինակների աշխատանքային հետաքրքրությունների, մտասեռուսների և ծրագրերի հետ։ Առաջին անգամ հայտնի է դառնում, թե ինչպես են գնահատել հայ նոր պոեզիայի ռահվիրայի՝ Հովհաննես Հովհաննիսյանի մուտքը՝ Պ. Պռոշյանն ու Վ. Թեքեյանը։ Պ. Մակինցյանի նամակներից պարզվում է «Պանթեոն» հրատարակչական ընկերության գործունեության որոշ հարցեր, նրա «Դիմագծեր» գրականագիտական ժողովածուի ստեղծման մտահղացումը և քննադատի կարծիքը Հովհաննիսյանի, Լեւոնտովի, Արթուր Շնիցլերի ստեղծագործությունների մասին։ Վաստակաշատ պատմարան Աշոտ Հովհաննիսյանի նամակները վկայում են, որ նա դեռևս 20-ական թվականներից զբաղվել է հայ նարոդնիկների պատմության հարցերով։ Ուշագրավ է Ծ. Չարենցի պաշտոնական գրությունը՝ կապված բանաստեղծի գրական ժառանգության հրատարակության հետ։

Նամակները դասավորված են ժամանակագրական կարգով։ Դրանցից № 1, 2, 3 և 4-ը պահվում են Հ. Հովհաննիսյանի տուն-թանգարանում, իսկ մյուսները՝ Ծ. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում՝ Հովհաննիսյանի ֆոնդի լրացուցիչ բաժնում։

Վ. Մ. ՎԱՐԳԱՆՅԱՆ

№ 1

25 հունվարի, 1889 թ.
Քիֆիս

Վաղուց պարտական էի Ձեզ նամակով շնորհակալություն հայտնել Ձեր քաղցր ուշադրության համար, որ ունեցել եք դեպի ինձ, Ձեր ինքնագիր մականագրությամբ Ձեր երիտասարդական հանճարի արտադրությունը իմ սեղանի վարդը դարձնելով։

Կարդացի և մեծ հաճությամբ զգացի, որ հայ աղքատիկ գրականությունը ապագայում փայլելու է մի նոր նշանավոր ուժով։

Այո, պ. Հովհաննիսյան, Դուք մի փայլուն աստղ եք հանդիսանալու Ձեր քանքարովը, որի մշակելը Ձեր սրբազան պարտականությունն է, մեր հույսը շատ է Ձեր վրա և աներկմիտ եմ՝ որ կարդարացնեք և չեք մեղանշիլ այդ շնորհաց դեմ։

Աշխատեցեք, գրեցեք և առաջ տարեք, շատ գրեցեք, շուտ-շուտ տվեք մեզ Ձեր չքնաղ երկասիրությունները։

Այժմ վաղաժամ է համեմատություններ անել Ձեր և մյուսների մեջ, այդ ապագայի գործ է։

Կեցցե՛ք, ուրեմն նորածիլ տաղանդ։

Կեցցե՛ք և արդյունաշատ լինեք։

Պ. Հովհաննիսյան. թույլ տվեք ինձ մի առաջարկություն անել Ձեզ, վաղուց է մտադիր եմ իմ «Հացի խնդիր» թարգմանել տալ ռուսաց լեզվով և մի ամսագրի մեջ տպագրել. այս միտքը տարիներ շարունակ զբաղեցնում է ինձ։

Մի քանիսը ինձ առաջարկեցին դիմել զանազան ամսագրերի և նպաստավոր պայմանով տպելու։ Բայց ես չգտալ ցարդ մի հարմարավոր թարգմանիչ, որը կարողանար երկու լեզուն ևս լավ իմանալով գեղեցիկ կերպով կատարել այս գործը։

Անցյալ օրը Ձեր գիրքը թերթիկս միտքս ընկաք Դուք, Դուք՝ սահուն լեզվով և քաջծանոթությամբ Արարատյան աշխարհիկ կյանքին և լեզվին,

ապահով, որ ուսաց լեզուն էլ քաջամուտ եք, ուրեմն ամենահարմար թարգմանիչը Դուք կլինեք:

Ձեռնարկեցեք, ուրեմն, թարգմանել, կհանձնենք որևէ խմբագրության՝ 1200 գիրք յուր ծախսը մեզ տալու վարկատվության պայմանով և այս առաջին տպագրության կեսը՝ 600 գիրքը, թող Ձեզ լինի:

Ես չեմ ստիպում շտապել, մեզք է ինձ խել Ձեր ազատ ժամերը և թույլ շտալ նվիրելու Ձեր բանաստեղծության կիրքը կատարելագործելու: Թարգմանեցեք մի տարումը. թող ուշ լինի, անուշ լինի:

Հուլիսով եմ, որ կստանամ Ձեր համաձայնությունը²:

Խորին հարգանք ՊԵՐՃ ՊԻՈՇՅԱՆ:

27 июня, 1893г.

Москва

Милостивый государь
Господин **ИОАННИСИАН**

Быть может, Вы ещё сохранили некоторые воспоминания о том лице, подпись которого стоит под этим письмом: я со своей стороны вспоминаю о кратковременном знакомстве каждый раз, как мною приходится перелистывать книжку ваших стихотворений.

Опираясь на это знакомство и будучи уверен, что Вы не откажетесь поспособствовать—делу, имеющему цель ознакомление русской публики с армянской словесностью, обращаюсь к Вам со следующей просьбой.

Во втором томе изданного мною и Минасом Берберяном сборника «Армянские беллетристы» предполагал, между прочим, поместить отдел поэтический. В настоящее время я озабочен собрать перевод из армянских поэтов и приготавливаю новые переводы. В. Я. Суренян передал мне, что какой-то господин в Эриване передал два Ваших стихотворения и вообще занимается переводами с армянского³.

Будьте так любезны, присылайте эти переводы из Ваших произведений. Если у Вас есть ещё какие-нибудь Ваши стихотворения в переводе? Ещё одна просьба. Прошу Вас сообщить мне фамилию и адрес того господина, который перевел Ваши стихотворения.

В. Я. Суренян говорит, что у него должны быть ещё какие-то переводы.

Уверен, что Вы не откажетесь помнить мои просьбы, прошу Вас верить моему искреннему уважению.

Готовый к услугам
Ю. Веселовский

P. S. Ответ Ваш прошу адресовать так: Москва, Кузнецкий мост, Бр. Джалкаровым, господину Александру Цатуряну

№ 3

3 сентября, 1893 г.
Москва

Многоуважаемый **Оганес Никитич!**

Недавно получил от Вас письмо и спешу ответить Вам. Мы были бы Вам очень благодарны, если [б] Вы в возможном скором будущем выслали (на моё имя) как перевод «Песни» и другие стихотво-

рения («Два поцелуя» уже переведено), так и в переводе из Ваших произведений Лестоном. Говорю «возможно в скором будущем» потому, что в октябре месяце все материалы для второго тома должны приступить к печатанию.

Господину Багиреву уже довольно давно дано (4-ого июля) писать по адресу: г. Баку, технический комитет, господину Богдану Караманову, с передачи Д. Багиреву, просим прислать его переводы, но, очевидно, письмо мне не доставлено.

От души благодарю Вас за сочувствие сборнику и готовность помочь нашему делу. Переводы я просил бы Вас выслать по следующему адресу: Москва, Чистопрудный Бульвар, дом Балашова № 19, кв. 3.

Готовый к услугам
Юрий Веселовский

№ 4

4 октября, 1983 г.

В конце августа обратился я к Вам с покорнейшей просьбой прислать мне сделанный Д. Багиревым перевод Вашего стихотворения «Песня», для напечатания его в сборнике. Не получив до сих пор этого перевода, который, как Вы мне писали, находится у Вас в Тифлисе, снова обращаюсь к Вам с просьбой немедленно прислать мне этот перевод, так как мы в самом непродолжительном времени предполагаем приступить к печатанию второго тома.

Адрес мой—Москва, Чистопрудный Бульвар, дом Балашова, № 19, кв. № 3. В надежде, что Вы исполните мою просьбу. Остаюсь готовый к услугам.

Ю. Веселовский

№ 5

29 փետրվարի, 1912 թ.
Մոսկվա

Մեծարգո Հ. Հովհաննիսյան

Նորերս իմ բարեկամ Մ. Բարխուդարյանից ստացա Ձեր բանաստեղծությունները: Սրտանց հայտնում եմ իմ ջերմ շնորհակալությունը և օգտվելով առիթից ուղղում եմ դիմել Ձեզ մի քանի հարցի մասին տեղեկանալու համար: Նախ՝ եթե Ձեզ հայտնի է, այստեղ «Պանթեոն» ընկերությունը՝ պատրաստում է լեռնոնտովի գործերի հայերեն թարգմանություններ, որ բանաստեղծի ծննդյան հարյուրամյակին լույս ընծայի:

Արդ՝ ունե՞ք Դուք արդյոք լեռնոնտովից արած թարգմանությունները, բացի մինչև օրս լույս տեսածներից և կկամենա՞ք ուղարկել մեզ: Գուցե համաձայնվեք կատարել նոր թարգմանություններ: Եթե ծանր չի, Ձեզ շատ կխնդրեի, որ այդ մասին մի քանի տողով հայտնեիք Ձեր կարծիքը: Այնուհետև կուզեի մի քանի տեղեկություն քաղել Ձեզնից՝ Ձեր վերաբերմամբ:

Ես մտադիր եմ գրքույկ տպագրել «Դիմագծեր» անունով, որտեղ աշխատում եմ տալ Ձեր, Ալ. Մատուրյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի մասին գրական բնորոշումներ: Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի մասին գրածս էսքիզներս շուտով լույս կտեսնի «Գարունի» երրորդ գրքում⁵: Այն ռեֆերատը, որ ես դեկտեմբերի 23-ին կարդացել եմ Ձեր մասին, պիտի վերամշակեմ, որ մտցնեմ գրքիս մեջ⁶: Ուստի ես կուզեի իմանալ, արդյո՞ք ունի՞ք բացի Վաղարշապատում տպագրված գրքից այլ աշխատություն և մտադիր՞ եք մոտավոր ապագայում լույս ընծայել⁷:

իհարկեք, իմ գործն է թերթել բոլոր պարբերականները և որոնել այն-տեղ Ձեր այն աշխատությունները, որոնք չեն մտել Ձեր գրքի մեջ, բայց եթե դուք ինձ ակնարկեք, թե արդյոք ինչ թերթում, որ թվականին եք տպագրել Ձեր արձակ, թե չափածո երկերը, անչափ կթեթևացնեք իմ գործը:

Այժմ՝ երբ ես արդեն ընդհանուր գծերով պարզել եմ, թե ինչպես եմ ասկանում Ձեր ստեղծագործությունները (սխալ թե ուղիղ—դա միևնույն է) ինձ համար շատ հետաքրքրական կլինի իմանալ, թե ինչ են ասել Ձեր մասին ուրիշները:

Բացի Լեոյի «Հայ գրականության պատմությունից»⁸, ինձ ոչինչ հայտնի է: «Նոր կյանքում» նոր լույս տեսավ մի փոքրիկ հոդված⁹, և «Գարունի» նորորդ գրքում կլինի մի ուրիշը¹⁰:

Եթե այդ մասին որոշ զոհաբերություններ անեիք ինձ, չափազանց կպարտավորեցնեիք: Այսքանս: Նորից իմ խորին շնորհակալությունը այն ուրախության համար, որ դուք պատճառեցիք Ձեր գրքով և ներեցեք ինձ, եթե չափազանց ծանրաբեռնեցի Ձեզ իմ հարցմունքներով:

Ձեզ միշտ հարգող՝ ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՅԱՆ

№ 6

Սիրելի բանաստեղծ

7 ապրիլի, 1912 թ.

Մոսկվա

Ձեր նամակը ես ուշ ստացա, որովհետև բնակարանս փոխել եմ: Այժմ ապրում եմ ուսանողական հանրակացարանում—քաղաքի ծայրին և ուշ-ուշ եմ քաղաք գնում: Անչափ շնորհակալ եմ Ձեր տված տեղեկությունների համար:

Ես բոլորովին «բեխաբար» եմ եղել Ձեր բոլոր հիշատակած դրուժյուններից և քննությունների այս «թեժ» վախտով կերթամ Румянцева աչքի անցկացնելու այդ բոլորը, իսկ ինչ որ վերաբերում է Ձեր առաջին գրքույկին (1887 թ.), ունեմ, նույնիսկ երկու օրինակ:

Ուղարկում եմ Ձեզ «Գարունը», որտեղ, ի միջի այլոց, կա և Ձեր մասին¹¹: Թեև, իմ կարծիքով, այն տեսակետը, որով չափում է Ձեր ստեղծագործությունը նույնքան արդարացի է, որքան արդարացի կլինեք, եթե Կարլ Մարքսին մոտենար մարդ՝ էսթետիկական-գեղարվեստական չափով: Հայտնի է, որ Մարքսը մի քանի ոտանավոր է գրել, եթե կարելի է և արդարացի բնորոշել Մարքսին լոկ որպես գեղագետ, ապա ուրեմն ինչու չորակել և Հովհ. Հովհաննիսյանին սոցիոլոգիական տեսակետից: Ես էլ ունեմ այդ ժողովածուի մեջ երկու հոդված, և Դուք անմիջապես կարող կլինեք ծանոթանալ Ձեր ապագա «քննադատին»:

Եթե իմ գրությունը այնքան հետաքրքրական թվա Ձեզ, որ Դուք մինչև վերջը կարդաք, ապա ինձ շատ պարտագրած կլինեք, եթե մի քանի տողով հաղորդեք Ձեր տպավորությունն ու կարծիքը այդ մասին:

Իմ կարծիքով գրական քննադատությունը նույնչափ արվեստ է, որչափ և ինքը գեղարվեստը և քննադատը: Քերթողի վերաբերմամբ նույնն է, ինչ որ դաշնակահարը, ջութակահարը, երգիչը, մի խոսքով «կատարողը» կոմպոնենտի վերաբերմամբ: Պետք է ճաշակ ունենալ գրողին ըմբռնելու համար և ապա շնորհք այդ ըմբռնումը արտահայտելու, մարմնացնելու:

Առաջինը բնատուր պետք է լինի, իսկ երկրորդը կարելի է ձեռք բերել: Ես ինքս շատ լավ դ գում եմ, որ իմ գրվածներում լեզուն շատ անգամ կաղում է, արտահայտիչ չէ, իզուր տեղը օտարաբանություններով է խճողված: Այդ բոլորը գործի հետ ձեռք կբերվի, բայց եթե առաջինս է պակասում, ապա ուրեմն անզարմանալի է:

Շատ և շատ կուրախացնեք ինձ, եթե խնդրածս՝ շիտակ կարծիքը, գոնե կարճառոտ կերպով հաղորդեիք:

Ինչ որ վերաբերում է Լեոմոնտովի թարգմանություններին, երևի շու-

տով մենք ընտրութիւն կկատարենք և կուղարկենք Ձեզ, այնուհետև Դուք ըստ Ձեր հայեցողության կշտկեք Ձեր ուզածը:

Ձերմագին ողջունենե՞րով՝ Պ. ՄԱԿԻՆՅԱՆ

№ 7

28 ապրիլի, 1913 թ.
Մոսկվա

Սիրելի բանաստեղծ

Բոլոր սրտով ողջունում եմ Ձեզ և շնորհավորում Ձեր գրական տունը: Ես գլուխ եմ խոնարհում, մեր ժանգ ու ժանտ իրականության մեջ, գրական անդաստանի վրա հորդ անձրևի տեղ թույն մաղող երկրակամարի տակ «շնորհօքն աւօռյ» բանաստեղծ ծնվածի առաջ:

Որովհետև ամեն անգամ, երբ հաջ գիրն ու գրականությունը իր մշակներից մեկի հաղթանակն է արձանագրում, մտածում ես ոչ միայն նրա ստեղծագործած վաստակի, այլև ստեղծագործող անձի վրա:

Միտք ես անում, որ մեզանում սոսկ արվեստագետ լինելու «իրավունքը» ոչ ոքի չի տրվել, որ բանաստեղծը, նախ «կանտորիկ» է, ապա բանաստեղծ, նախ բորսային գործիչ է, ապա գրական, նախ գրագիր է, ապա գրագետ, նախ վարժապետ է, ապա վարպետ:

Եվ հետո մտածում ես, որ այդ «կանտորիկները», բորսային գործիչները, գրագիրներն ու վարժապետները հոյակապ գործ են կատարել՝ մի քանի տասնյակ տարիների ընթացքում:

Բավական է, ՍՄՐՄԱՏԵ բառը «չիմացողը» Դաղըաշյանի բառարանը համեմատի Գամառ Քաթիպայի պես հայագետի ձեռքով կազմած անտիպ բառարանին, որպեսզի իսկույն համոզվի, թե որքան ենք մենք առաջ գնացել:

Եվ հայ լեզվի և արվեստի առաջխաղացման գործում Ձեր կատարած դերը՝ կպարզի հայոց գրականության պատմությունը: Պարզ է, որ Ձեր սերմած «Հատիկը» արդեն ոսկի հատիկ է տվել, և Ձեր «Աշուղը» մի այլ «աշուղի» է լեզու տվել, իր «երգերն ու վերքերը» երգելու¹²: Բայց «ազա՞նությունը» ի վերուստ է մեղ տված» և մենք չենք ուզում բավականանալ եղածով:

Եվ ես կուզեի, որ Ձեր «սաղն ու քամանչեն» նորից դուրս գար «փականակից», նորից հանդես գար և խոսքով «այրեր մեր սրտերը»¹³:

Բոլոր սրտով ողջունում եմ Ձեզ, շնորհավորում եմ Ձեր տունը և ցանկանում եմ նոր ուժ, նոր թափ Ձեր քնարին:

Ձեզ միշտ հարգող՝ Պ. Մակինցյան

Նոր ստացա Ձեր նամակը¹⁴, որի համար շատ և շատ շնորհակալ եմ: Ձեր նամակից միայն գլխի ընկա, որ իսկապես եւ տեղիք եմ տվել կարծելու, որ ես անարդար եմ գտնվել Ձեր նկատմամբ: Ա՛յ. Իսահակյանին ես անձամբ ծանոթ եմ, Ձեր ասածները նրանից ինքս եմ լսել և դեռևս անցյալ տարվա դեկտեմբերի 23-ին, Ձեր մասին արած զեկուցման մեջ շեշտել եմ այդ հանգամանքը:

Ես ինքս անձամբ լսել եմ Ավ. Իսահակյանից, այս խոստովանությունը. «Երբ կարդացի «Արաղը»,—ասում է Իսահակյանը,—համոզվեցի, որ բարբառ կարող է արտահայտել մեր ապրումները և գուցե ավելի գեղեցիկ կերպով: Քան գրական լեզուն: Ես իմ «Երգերն ու վերքերն» ուղարկել եմ Հովհ. Հովհաննիսյանին, որպես իմ ուսուցիչին: Ուրիշ բան է այն հարցը, թե Ավ. Իսահակյանը հետնորդներ, ընդօրինակողներ է ունեցել՝ Ալ. Մատուրյանից, Շ. Կուրդինյանից սկսած մինչև Արմենուհի Տիգրանյանը և այլք: Սակայն այս միտքը ես չեմ կրկնել Իսահակյանի մասին գրածս հոդվածի մեջ. որովհետև իմ ծրագրած գրքում լինելու էր և Ձեր մասին մի հոդված և քանի որ մի տեղ արդեն ասված է, կարիք չկար նույնը կրկնել երկրորդ անգամ: Այդ հոգեբանական սխալ է, և առաջ է եկել նրանից, որ ես գրեից մի կտոր

հանելով չեմ հարմարեցրել առանձին հրատարակության համար, իսկ այն, ինչ հասկանալի կլիներ ամբողջության մեջ, ջոկ դուրս բերած թյուրիմացության տեղիք է տալիս:

Կարծում եմ, որ այդ ևս, զարմանալի կլինի, մանավանդ որ «Գարունում» լուս տեսածներն էլ պիտի վերամշակեմ և ապա նորից տպագրեմ¹⁵: Շատ ցավում եմ, որ ոչ մի տող չեմ կարողանում տպագրել իմ կարգացած ռեֆերատը Ձեր մասին: «Մշակը» և «Հորիզոնը» որքան անհամակրելի են, որ մի տեսակ քաշվում ես նրանց ուղարկել, իսկ «Գարունն» էլ ե՞րբ պիտի նորից լույս տեսնի: Այդ կողմից շատերն են անբավարարված: Այս մայիսի մեկին Արթուր Շնիցլերի ծննդյան հիսնամյակն էր: Բոլոր ռուս լրագրերը շեշտեցին այդ հանգամանքը: Գերմանական և մանավանդ Ավստրիայի լրագրերի մասին էլ ի՞նչ ասել կուզի. ուղղակի ասում է, որ Վիեննան 50 տարեկան է՝ որովհետև Արթուր Շնիցլերի և Վիեննայի ծննդյան օրը՝ միևնույն է:

Որքան ինձ հայտնի է Շնիցլերից ոչինչ չկա թարգմանված: Շուտով «Պանթեոնը» կսկսի տպագրել նրա երկերի ժողովածուի առաջին հատորը և, ի միջի այլոց, ես էլ էի պատրաստել մի երկու բան: Մեծ ուրախությամբ կտպագրեի Շնիցլերի ծննդյան հիսնամյակին մի գրույց փոքրիկ կիսաքննական ակնարկ, բայց որ տեղ չկա...¹⁶

Ջերմ ողջույններ

Ձեր՝ ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆ

№ 8

15 հոկտեմբերի, 1913 թ.
Մոսկվա

Սիբեի բանաստեղծ

Ուղարկում եմ Ձեզ մեր գիրքը¹⁷: Երևի արդեն լրագրերից իմացած կլինեք, որ լույս է տեսել: Ներողամիտ եղեք, որ ուշացավ. ստիպված էի նախ գիմել Բաքու, Ձեր հասցեն բերել տալ և ապա ուղարկել, դրանից է, որ ուշ եմ ուղարկում:

Գրքի մեջ հայտարարությունից կիմանաք, որ Լեոմոնտովի մասին արդեն սկսել ենք հոգ տանել: Այդ մասին առաջ ես Ձեզ գրել էի, բայց դուք Ձեր մասնակցության մասին ոչինչ չհայտնեցիք: Այժմ օգտվելով առիթից, նորից ուզում եմ այդ մասին հիշեցնել Ձեզ: Գուցե արդեն մի քանի բան պատրաստե՞մ եք: Այս ժամանակ լավ կլիներ, որ մեզ տեղեկացնեք:

Լեոմոնտովը մի այնպիսի հսկա է, որի ծանրությունը միայն բոլոր հայ հեղինակների միացած ուժը կարող է տանել իր ուսերի վրա: Եվ այնքան բազմակողմանի է նրա քնարի արտահայտությունը, որ մեր բանաստեղծներից յուրաքանչյուրը կգտնի իր «հանգին» երկեր:

Շնորհավորում և ողջունում եմ Ձեր տեղափոխությունն ու օդափոխությունը¹⁸:

Ձեզ միշտ հարգող՝ ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆ

№ 9

23 հոկտեմբերի, 1912 թ.
Պուլխ

Քիչ մը ուշ, հազիվ երկու օր առաջ, ստացա այն կոչը, որ ինձ ևս պատիվ ըրած եք զրկել հանուն այն հանձնաժողովի, որ կազմած է տոնելու համար մեծատաղանդ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի գրական գործունեության երեսունամյակը:

Կփռվեմ նախ շնորհակալ ըլլալ Ձեզ, որ մտածած եք զիս մասնակից ընել այս հանդիսության և հետո հայտնել այն խորին հիացումն ու հարգանքը, որ կզգամ հանդեպ հոբելյանին:

Հորմեհեան ծանոթացած էի իր գործին հատուկորո հատվածներու, կնկատեի Հովհաննես Հովհաննիսյանը իբրև մեր ամենին հարազատ, զղա-սումի և արվեստի տեսակետով ամենին բանաստեղծ բանաստեղծներու մե-կը, իր ամբողջական քերթվածներու հավաքածուին ընթերցումը վերջերս զիս հաստատեց այս համոզումիս մեջ, ինչպես իր անդին տեսությունն ալ վերջին կաթողիկոսական ընտրությանց օրերուն, իմ վրաս թողեց ամենա-քաղցր տպավորություն մը: Հովհաննիսյանի խոսքը երգ է և իր երգը՝ խոսք ու խորք ունի իր մեջ՝ ըլլալով միևնույն ատեն հայ քնարին ամենին ներդաշ-նակ երգերին մին:

Բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին կամտուցեմ իմ եղբայրական, պիտի ըսեի որդիական, սրտագին ողջուններս այն խորին հարգանքին հետ, որ ամեն զինքը ճանչցող հայ կզգա իր մաքուր անունին և գեղեցիկ տաղանդի համար:

Ընդունեցեք, խնդրում եմ իմ ամենախոնարհ մեծարանքս, որով կմնամ Ձերդ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

№ 10

28 հոկտեմբերի, 1928 թ.

Լենինգրադ

Սիրելի Իվան Նիկիտիչ

Անիկը¹⁹ հաղորդում է ինձ քո բարենները, որոնց համար քեզ իմ շնոր-հակալությունն եմ ուղարկում: Իմ մեկնելը Երևանից այնպես եղավ, որ չկա-րողացա մնաս բարև ասել իմ հին ու լավ բարեկամներին: Այդ առթիվ Անի-կը հայտնեց ինձ քո տրտունջը: Արդարացի ես, իհարկե: Քո ներողամտու-թյան վրա ես վստահ եմ:

Այս նամակը քեզ գրելու առիթ է տալիս ինձ հին մի սյաղմուծություն, որ կամենում եմ ստուգել: Հարցը վերաբերում է անցած-գնացած մի քանի երևույթների ու դեպքերի, որոնց դեռևս կարող ես իրազեկ լինել:

Վերջին տարին ինձ զբաղեցնում է հայերի քաղաքական-հասարակական շարժումների նոր անցած տասնամյակների պատմությունը: Ուսումնասիրու-թյունների ընթացքը բերել հասցրել է ինձ այն իրողության առաջ, որ կով-կասահայ մտքի ազգային-հեղափոխական անդրանիկ խմորումներից մեկը տեղի է ունեցել ճշգրիտ հայի ժողովարան», «անփուլ փարախ» էշմիածնի մանկության ընկերների շրջանում: Կա մի հիշատակություն այն մասին, որ պատերից ոչ այնքան հեռու քո ծննդավայր Վաղարշապատում և հենց քո մանկության ընկերների շրջանում: Կա մի հիշատակություն այն մասին, որ Վաղարշապատի մի խումբ պատանիներ՝ Սրապիոն և Սմբատ Տեր-Գրիգորյան, Գարեգին Ծնգիբարյան, Ստեփան Թաղիանոսյան և Հովհաննես Հովհաննիս-յան²⁰, 80-ական թթ. սկզբներին հրատարակել են Երևանում «Հայաստանի Ավետարներ» (թե՛ «Ազատարե՞ր Հայաստանի») խմորատիպ թերթը: Որքա՞ն ստույգ է այս հիշատակությունը, ի՞նչն է սխալ, ի՞նչ կարող ես հաստատել կամ ավելացնել²¹: Եղե՛լ է այդպիսի մի թերթ, եթե այո, ի՞նչ ուղղություն է ունեցել՝ ազգային-ազատագրական, նարոդնիկական-հեղափոխական կամ որևէ ուրիշ:

Կա հիշատակություն այն մասին, որ Մոսկվայի մի խումբ ուսանողներ 82 թվականին ստեղծել են «Հայ հեղափոխականների միություն» անունով մի կազմակերպություն, իսկ 1882/83 ուսման տարում հրատարակել «Ազա-տության Ավետարներ» անունով մի թերթ: Արդյոք այս թերթը Երևանում հրա-տարակվածի շարունակությունն է, քանի որ ուսանողական այդ խմբի մեջ մտնում էին վերը հիշածներից Սրապիոն Տեր-Գրիգորյանը, իսկ մի քչի վկա-յությունը նաև նրա եղբայրը՝ Սմբատը: Ուսանողական այս խմբի անդամ-ներն էին նաև Ն. Աբելյանը, Դ. Ներսիսյանը, Միքայել Զալյանը, Մարգար Արամյանը և Մարտին Վեբլյանը: Սրանց միացավ հաշորդ տարին Թամար Ներսիսյանը: Տեղեկություն կա որ այդ խումբը նարոդնիկական հովերով էր

տարված²²։ Որքա՞ն ստույգ է այդ։ 1883/84 ուս. տարին այստեղ հիշատակված Արելյան ներսեսը, Սրապիոն և Սմբատ Տեր-Գրիգորյանները գործում էին Թիֆլիսում։ Նրանք մտնում էին մի խմբի մեջ, որի հետ կապ ունեին Արահամ Դաստակյանը, Ք. Միքայելյանը, Ղարաշյանը և այլն։ Այդ խմբի աջակցությամբ 1883 թ. երկիր անցան Թոխմախյանի ղեկավարությամբ՝ Սանդալն ու Տ. Փիրումյանը²³։

Ինչպես տեսնում ես՝ պատմական շարունակություն կա այս մարդկանց և վաղարշապատցիների այն խմբի մեջ, որոնք 80-ական թթ. սկզբին թերթ էին հրատարակում Երևանի գիմնազիայում։ Կարող ես օգտակար լինել ինձ այս բոլորի մասին քո հիշողություններով, լրացումներով կամ ուղղումներով։

Անիկն ասում է, որ Սմբատ Տեր-Գրիգորյանը մինչև այժմ էլ կենդանի է և ապրում է Վաղարշապատում։ Ստույգ է այդ, գուցե նրան ևս ուղղակի գրեի, եթե իմանալի հասցեն։ Պետք է հայտնեմ քեզ նաև իմ կողմից դեռ չստուգված մի տեղեկություն այն մասին, որ Մոսկվայի և Թիֆլիսի խմբերում գործող Դավիթ ներսիսյանը եղել է ցարական պրովոկատոր, ստացել է պահնորդական բաժանմունքից ամսական 250 ռ. ուճիկ...

Ինչպե՞ս է քեֆդ-հալդ, Զաբուհի Եֆրեմովնա։ Երիտասարդներին իմ կողմից բարևներ։

Հնդունիր նույնը նաև ինքդ

Քո՝ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.

Զմոռանամ հարցնել, ճանաչո՞ւմ էիր Մոսկվայում շուշեցի ուսանող Հովսեփ Տեր-Մովսիսյանին²⁴։ Նոր միայն ծանոթանում եմ «Մեղու Հայաստանի» թերթում զետեղված նրա հոդվածներին։ Վերին աստիճանի ուշագրավ դեմք է եղել ըստ երևույթին։ Տպավորությունս այն է, որ նարոդնիկներից ազդված այդ երիտասարդը, ամբողջ գլխով բարձր է եղել իր ժամանակակիցներից հասարակական-տնտեսական հարցերի լուսաբանման տեսակետից։ Զարմանալի տհաս է երևում միայն քաղաքական հարցերում։ Ի՞նչն է եղել սրա, ինչպես նաև Սրապիոն Տեր-Գրիգորյանի ինքնասպանության պատճառը։

Նույն

Հասցես՝ Ленинград, ул. Герцена, д. № 39, ком. 138, А. Иоаннисяну..

№ 11

25 դեկտեմբերի, 1928 թ..
Լենինգրադ

Սիբեի Իվան Նիկիտիչ

Շատ շնորհակալ եմ պատասխանիդ համար։ Զգացված եմ, մանավանդ որ ընայած տկարությանդ, նեղություն ես ստանձնել նույնիսկ հարցուփորձի ենթարկելով կողմնակի մարդկանց՝ Կիրակոս Գանձակեցու ասած՝ «զի թերևս գտանես ինչ պիտանոցս որ կարող իցե զփափագս ըզձից խնդրողին»։ Այնուամենայնիվ, օգտվելով քո սիրալիկ ուշադրությունից, վճռել եմ հետապնդել քեզ իմ հարցասիրությամբ։ Որովհետև որպես պատմագրության արվեստի մշակ՝ կամենում եմ «ոչ բամբասասեր մտոք, այլ ճշմարտությամբ զելս իրացն» ասել, ինչպես գրում է Նդիշեն։

Որ քո պատանեկության ընկերները Մոսկվայում թերթ են հրատարակել, այդ ստույգ պետք է համարել միանգամայն։ Ստուգման կարոտ է միայն այն արդյունքը համանուն թերթ հրատարակել են նրանք հատկապես Երևանում կամ Թիֆլիսում, թե ոչ, Երևանի մասին տալիս են բացասական պատասխան, Թիֆլիսի վերաբերմամբ՝ դրական։ Արդյոք հաստատ գիտես, որ «Ազատության ավետարեբը» հրատարակվում էր Թիֆլիսում։ Այս է, որ կկամենալի իմանալ։ Դուցե շփոթում ես Թիֆլիսն ու Մոսկվան, կամ Երևանն ու Թիֆլիսը։ Եթե այս առթիվ հարկադրված լինես հարցում անելու կողմնակի մարդկանց՝ գու-

ցն առիթից օգտվելով տեղեկանայիր նաև՝ արդյոք ութսունական թվականների կեսերին հրատարակվում էին Թիֆլիսում «Մունեթիկ» կամ «Հայաստանի Ձայն» անունով թերթերը²⁶ հակացարիստական ուղղությամբ: Հնարավոր է արդյոք իմանալ որևէ մանրամասնություն այդ թերթերի մասին՝ հրատարակության հանգամանքների, խմբագիրների կամ ուղղության վերաբերյալ:

Նախընթաց նամակը քեզ ուղղելուց հետո տարօրինակ նորություններ իմացա նաև Սրապիոն Տեր-Գրիգորյանի մասին: «Հովիվ» տերտերաթերթը 1908 թ. № 26-ում քաղվածաբար տեղեկություններ է տալիս Ամերիկայում լույս տեսած Ս. Գաբրիելյանի՝ «Հայկական ճգնաժամ» գրքի մասին: Այստեղ, ի միջի այլոց, կան հետաքրքիր մանրամասնություններ ոմն Ս. Տ. Գ.-ի մասին, որն անշուշտ ինձ զբաղեցնող Սրապիոնն է: Հարկադրված եմ ցավացնել գլուխդ և շարել այստեղ նրան վերաբերող տողերը:

«1886-ին մի համալսարանավարտ իրավաբան հայ երիտասարդ Ս. Տ. Գ. խնդրում է իրեն համար դատաստանական պաշտոնի կանդիդատուրի տեղ. նրան խոստանում են տալ հաշտարար դատավորի օգնականի պաշտոն, եթե նա բաց կանխի մի որևէ հայկական գաղտնի ընկերություն: Նա պատասխանում է, թե իրեն հայտնի չեն այդպիսիները, և կարծում է, թե չկան էլ: Այն ժամանակ նրան մատնացույց արին, որ եթե այդպիսին չկա, կարելի է ստեղծել, սարքել այդպիսին և հետո հանձնել վարչության: Հայ իրավաբանը սիրում է մեկ օրիորդի, որի հետ ուզում էր և պարտավոր էր՝ անպատճառ ամուսնանալ: Եվ որովհետև ինքը ունեւոր չէր և կամենում էր իր ապագա կնոջը ապահով ապրուստ տալ, նա այդ ցույց տված պաշտոնն ստանալու եղանակը միակեր համարեց և շտապով ստեղծեց մի փոքր ընկերություն, որի նպատակը իբր թե պետք է լիներ կեղծ դրամներ շինել և այդ դրամներով Տաճկաստանի բոլոր հողերը գնել. այդ ընկերության առաջին անդամներն էին ինքը՝ Ա. Տ. Գ., մեկ դերձակ, մեկ դեղագործ, մեկ ոսկերիչ և վերոհիշյալ Փիլիպոսյան Կարապետը (վանի ռուսական հյուպատոսարանի ծառայող): Երկու շաբաթից հետո Ս. Տ. Գ. վարչությանն է մատնում իր սարքած ընկերության անդամներին: Այնուամենայնիվ ինքը՝ Ս. Տ. Գ. իրան խոստացած պաշտոնը չէր ստանում, իր սիրելի օրիորդը հանկարծակի մեռնում է (երևի թունավորվում է), ինքն էլ օրիորդի թաղելուց մեկ օր հետո, ընկնելով էջմիածնի վանքի լճի մեջ խեղդվում է, իսկ ընկերներից արդարանում են. առանց դատարանի՝ դեղագործը, դատարանով՝ Փիլիպոսյան Կարապետը, իսկ մնացածները դատապարտված են տաժանակիր աշխատանքների»:

Քեզ՝ ինչպես, իսկ ինձ համար այս «մանրամասնությունները» սյուր-պրիզ են կատարյալ: Դուրս է գալիս, որ գոյություն ունի պրովոկատորության վերսիս ոչ միայն Դ. Ներսիսյանի, այլև Ս. Տեր-Գրիգորյանի մասին: Պետք է ասեմ, որ անհնարին բան չկա այդտեղ: Հայտնի է, որ 80-ական թթ. նարոդովոլյան շարժումը ցարիզմը խեղդելու փորձ էր անում և հայ պրովոկատորության միջոցով. գիտես իհարկե Судейкин-ի և Дергеев-ի²⁸ մասին: Дергеевщина-ն մի ամբողջ երևույթ էր 80-ական թթ.: Արդյոք նույն այդ дергеевщина-յին չէ՞, որին տուրք են տվել նաև հայ գործիչները... Այսպես թե այնպես պիտի ստուգել այս: Մասնավորապես կարծում եմ պիտի նեղություն կրես պարզելու էջմիածնի լճի գաղտնիքը... Տակավին ապրող մարդիկ կան այդ ժամանակվանից, որոնք գուցե լուսաբանեն խնդիրը, հաստատեն կամ հերքեն պրովոկացիայի վերսիսն:

Շտապելու բան չէ, իհարկե: Աշխատիր, եթե կարող ես, ժամանակի ընթացքում հարց ու փորձով ստուգել ու իմանալ: Դուցե որևէ բան դուրս գա Ներսիսյան լճի տղմոտ հատակից...

Առայժմ այդքան. ջերմ բարևներ բոլորիդ՝ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

[Չարհեցի պաշտօնական գրությունը բանաստեղծի այրուն՝]
Ջառուհի Հովհաննիսյանին

№ 12

15 հունվարի, 1930 թ.
Երևան

Պետհրատը որոշել է հրատարակել Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծությունների (ինքնուրույն և թարգմանական) ժողովածու, որի մեջ պետք է մտնեն նաև Հովհաննիսյանի անտիպ աշխատություններից:

Հոնորարը տրվելու է Ջեդ՝ Պետհրատի նորմաներով:

Ժողովածուն կազմելը և խմբագրելը հանձնված է ընկ. Թադ. Ավդալբեգյանին, որին խնդրում ենք հանձնել հարկավոր նյութեր՝ հրատարակության պատրաստելու համար²⁷:

Գեղարվեստի բաժնի վարիչ Ե. ԶԱՐԵՆՅԱՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՑՈՒՆՆԵՐ

1. Հովհ. Հովհաննիսյանն իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն լույս տեսնելուն պես (1887 թ.) ընծայականով ուղարկել է ժամանակի ճանաչված գրողներին, այդ թվում նաև Պերճ Պոռյանին և պարբերականների խմբագիրներին՝ նրանց կարծիքը իմանալու նպատակով:

2. Հովհաննիսյանը չի տվել իր համաձայնությունը Այն, ինչ լկատարեց բանաստեղծը, կատարեց դուստրը՝ Աննա Հովհաննիսյանը: Նրա թարգմանությամբ «Հացի խնդիրը» լույս տեսավ 1950 թ. և ունեցավ մի քանի հրատարակություններ:

3. Հովհաննիսյանի արխիվային ֆոնդում պահվում են երկու նամակ՝ գրված Երանից, 1890 թ. դեկտեմբերի 4-ին: Նամակի հեղինակը՝ Դ. Բագիրյանը, ներկայացնում է Հովհաննիսյանին իր կատարած «Երգ» և «Երկու համբույր» բանաստեղծությունների թարգմանությունները: Բանաստեղծը, որ շատ բժախեղի է եղել թարգմանությունների նկատմամբ, չի ավանդել դրանք և չի ուղարկել Ցու. Վեսելովսկուն: Այդ մասին իրազեկ է եղել Վարդգես Սուրենյանցը, որն այդ ժամանակ (1889—1891 թթ.) ուսուցիչ էր Գեորգյան ճամբարանում: Նկարիչը այդ թարգմանությունների մասին պատմել է Ցու. Վեսելովսկուն՝ Մոսկվայում եղած ժամանակ:

4. 1911 թ. նոյեմբերին Վ. Տերյանը, Պ. Մակինցյանը, Ց. Խանզադյանը և Կ. Միքայելյանը կազմակերպում են «Պանթեոն» հրատարակչական ընկերությունը, որը նպատակ էր դրել հայ ընթերցողին մատուցել ռուս և համաշխարհային դասական գրողների երկերը՝ ընտրել թարգմանությամբ և չքնդ հրատարակությամբ: Նրանք, սակայն, չկարողացան իրականացնել իրենց մտադրությունները:

5. «Գարուն» ամսնախի 1912 թ. երրորդ գրքում տպագրվել են «Դիմագծեր» ընդհանուր վերնագրի տակ Պ. Մակինցյանի ծավալուն գրականագիտական հոդվածները՝ Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի մասին (էջ 248—371):

6. Մոսկվայի հայ ուսանողական միությունը իր ակումբում կազմակերպում էր դրական և բեկույթներ: Այդ երեկույթներից մեկը (1912 թ. դեկտեմբերի 23) նվիրված է եղել Հովհ. Հովհաննիսյանին: Պ. Մակինցյանը նիստում կարդացած իր զեկուցումը ներկայացրել է «Բաքվի ձայն» թերթին, որը տպագրվել է Հովհաննիսյանի 30-ամյա հոբելյանի օրը (1913 թ. ապրիլի 27-ի համարում): Նույն հոդվածը, անշան փոփոխություններով, հեղինակը վերահրատարակում է 1924 թ. «Մարտակոչ» օրաթերթի մայիսի 13-ի համարում՝ բանաստեղծի ծննդյան 60-ամյակի առիթով:

7. Նամակներից պարզվում է, որ նա ձեռքի տակ չի ունեցել Հովհաննիսյանի 1908 թ. Բաքվում լույս տեսած «Բանաստեղծություններ» ծավալուն ժողովածուն:

8. Դա. Լեոյի «Ռուսահայ գրականություն» է, որը լույս է տեսել Վենետիկում 1904 թ.: Այստեղ Լեոն միանգամայն սխալ գիրքներից է գնահատում Հովհաննիսյանի ստեղծագործությունը:

9. Խոսքը 1912 թ. «Նոր կյանք» երկշաբաթաթերթում տպագրված Դ. Անանունի «Հովհաննես Հովհաննիսյան» (Ձ 3—4, էջ 113—121) հոդվածի մասին է:

10. Նկատի ունի «Գարուն» երրորդ գրքում (էջ 207—247) տպագրված Ալ. Մյասնիկյանի հոդվածը՝ «Հ. Հովհաննիսյանի և Ալ. Մատուրյանի բանաստեղծությունների հասարակական արժեքը»:

11. Տե՛ս ծան. 10:

12. Նկատի ունի Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն, որը լույս է տեսել 1897 թ. Շիրազի ու վերջերս խորագրով:

13. Հովհաննիսյանի «Աշուղ» բանաստեղծության նախավերջին տողից է. «Երբեք վա-
ռիր մեր սրտում»:

14. Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, ինչպես նաև Հով-
հաննիսյանի տուն-թանգարանում մեղ չհաջողվեց Պ. Մակինցյանին հասցևագրված որևէ նա-
մակ հայտնաբերել:

15. Մակինցյանը այդ ցանկությունը չկարողացավ իրականացնել: Նրա քննադատական
հոդվածները ի մի բերեց գուստրը՝ Անահիտ Մակինցյանը: Հրատարակվեց «Դիմադրած» խո-
րագրով, այսինքն՝ այն վերնագրով, ինչ ծրագրել էր քննադատը:

16. Պ. Մակինցյանի՝ Արթուր Ենիցյանի մասին գրած ակնարկը տպագրվել է որպես
1912 թ. Մոսկվայում լույս տեսած գրողի նովելների և վիպակների առաջին ժողովածուի առա-
ջաբան, Այդ ժողովածուի թարգմանիչներն էին Պ. Մակինցյանը (խմբագիր), Ավ. Իսահակյանն
ու Վ. Տերյանը:

17. Խոսքը «Գարուն» ամսականի երրորդ գրքի մասին է:

18. Հովհաննիսյանը 1912 թ. օգոստոսի վերջերին տեղափոխվում է Բաքու՝ Նա ընտրվել
էր քաղաքային վարչության ուսումնարանական հանձնաժողովի նախագահի պաշտոնում: Բա-
նաստեղծը այդ պաշտոնում մնաց մինչև 1918 թ. մայիսի 19-ը՝ Բաքվի կոմունայի անկումը:

19. Անիկը բանաստեղծի դուստրն էր (1898—1977), որը այդ ժամանակ սովորում էր
լենինգրադի Գերցենի անվան արվեստի պատմության ինստիտուտում: Նա թարգմանել է Մու-
րացանի «Գևորգ Մարդակտունին», «Պատմվածքները», Ստ. Զորյանի «Պապ թագավորը»,
Պ. Պոռյանի «Հացի խնդիրը» և այլն:

20. Թվարկած բոլոր անձնավորությունները իրոք որ վաղարշապատցիներ են: Սրապիոն
և Սմբատ Տեր-Գրիգորյանները, Գարեգին Ներսիսյանը (բանաստեղծի մորաքրոջ որդին) և
Ստեփան Թադևոսյանը, լինելով Ներսիսյան դպրոցի աշակերտներ, 1880 թ. Թիֆլիսում
ընդգրկվել էին տեղի նարոդնիկական խմբակում: Նամակում նշվում է նաև Հովհաննիսյան Հով-
հաննիսյան անունը, սակայն այդ անձը չի կարող լինել բանաստեղծը, քանի որ այդ ժա-
մանակ՝ 1876—1883 թթ. նա Լադարյան ճեմարանի սան էր:

21. Երևանում հրատարակված այդպիսի խմբատիպ թերթի գոյությունը առ այսօր
հայտնի չէ: Պատմարանի նշած անձնավորությունները Ներսիսյան դպրոցը ավարտելուց հետո
տեղափոխվում են Մոսկվա՝ բնդունվում տեղի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:
Մոսկվայում մի խումբ հայ ուսանողների՝ Ներսես Արելյան, Դավիթ Ներսիսյան, Բամբա-
Աղաբաբյան, Միքայել Զալյան և ուրիշների հետ, 1881 թ. նրանք ստեղծում են անլեզու «Հայ-
րենասերների միություն» կադմակերպությունը և հրատարակում «Ազատության ավետարներ»
լրագիրը:

22. Այդ խումբը հետամտում էր ազատագրել Արևմտյան Հայաստանը:

23. Իրոք, 1883 թ. Արշակ Թոխմախյանը, Սանդալը (գյուղագիր Ալեքսանդր Պետրոսյան),
Տիգրան Փիրումյանը և Հովհաննես Մելիք-Թանդանը մեկնում են Արևմտյան Հայաստան:

24. Հովսեփ Տեր-Մովսիսյանը կրթությունը ստացել է Պետերբուրգում: 1878 թ. տեղա-
փոխվում է Մոսկվա և դառնում «Մեզու Հայաստանի» թերթի թղթակիցը: 1878—1882 թթ.
նշված լրագրում տպագրվում են նրա հոդվածները, ուր հանդես է գալիս իբրև հայ գյուղա-
ցու դրությունը լուսավորության միջոցով բարեփոխելու կողմնակից:

25. «Հայ պարբերական մամուլի մատենագիտության» մեջ «Հայաստանի ձայն» պարբե-
րականի մասին հիշատակություն չկա: Իսկ «Մունետիկ» ամսագիրը 1883 թ. հրատարակվել է
Թիֆլիսում, որպես «Անդրկովկասի Գերագույն միջադպրոցի հեղափոխական խմբակի» օր-
գան:

26. Սերգեյ Դեզանը «Նարոդնայա վոլյայի» կարմիր խաչի ակտիվ անդամներից էր:
1882 թ. բանտարկվելով Օդեսայում, դառնում է տեղի ոստիկանապետի՝ Սուգեյկինի լրտեսը և
մատնում իր գործընկերներին:

27. Ե. Զարենցը 1923—1935 թթ. եղել է Պետհրատի գեղարվեստական : գրականության
բաժնի վարիչ: Այդ տարիներին նա կարողացավ հրատարակել մեր դասականների ստեղծա-
գործությունները: Հերթը հասել էր Հովհաննիսյանին, Սակայն Զարենցի այդ նախաձեռնու-
թյունը մնաց անկատար: